«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 դեկտեմբեր 2025թ.

ԵՐԵՎԱՆ 2026

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

27.04.2026
N 012614

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ. Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ինվիա Ինվեսթմենթս» Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ

ADVISORY · ASSURANCE ·ACCOUNTING ·TAX
Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել

հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր
Լ. Հակոբյան

27.04.2026թ.

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	31.12.2025թ.	31.12.2024թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		39,944	35,793
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		(2,094)	(1,671)
Զուտ տոկոսային եկամուտ	**5**	**37,850**	**34,122**
Զուտ ստացված միջնորդավճարներ		98,619	55,420
Զուտ օգուտ արտարժույթի վաճառքից և փոխարժեքային տարբերությունից	**6**	10,833	28,976
Արժեզրկման ծախս		(724)	-
Զուտ այլ գործառնական օգուտ/(վնաս)		1,897	11,268
Գործառնական շահույթ		**148,475**	**129,786**
Անձնակազմի գծով ծախսեր		(89,205)	(66,683)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	**7**	(122,734)	(89,639)
Վնաս մինչ հարկումը		**(63,464)**	**(26,536)**
Շահութահարկի գծով փոխհատուցում	8	10,135	2,909
Տարվա վնաս		**(53,329)**	**(23,627)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(53,329)**	**(23,627)**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	31.12.2025թ.	31.12.2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	9	1,745	18,118
Տեղաբաշխված ավանդներ	10	179,822	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11	18,096	13,737
Տրված փոխառություններ	12	83,037	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	13	370,056	378,360
Ներդրումներ այլ անձանց կապիտալում		675	674
Հետձգված հարկային ակտիվներ	8	15,084	4,949
Հիմնական միջոցներ	14	11,232	1,966
Այլ ակտիվներ	15	49,836	25,340
Ընդամենը՝ ակտիվներ		**729,583**	**443,144**
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	48,423	-
Ներգրավված փոխառություններ	17	288,327	-
Կրեդիտորական պարտքեր բաժնային արժեթղթերի հետգնման գծով		84,240	84,240
Պարտավորություններ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով		6,330	3,689
Այլ պարտավորություններ	18	11,854	11,477
Ընդամենը՝ պարտավորություններ		**439,174**	**99,406**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	19	336,890	336,890
Էմիսիոն եկամուտ		39,870	39,870
Կուտակված վնաս		(86,351)	(33,022)
Ընդամենը՝ կապիտալ		**290,409**	**343,738**
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**729,583**	**443,144**

Անահիտ Շաքարյան
Գործադիր տնօրեն

Սիրանուշ Խլղաթյան
Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ

27.04.2026թ.

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

(հազար դրամ)

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**351,000**	**-**	**(9,395)**	**341,605**
Հետ գնված կապիտալ	(14,110)	39,870	-	25,760
Տարվա վնաս	-	-	(23,627)	(23,627)
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**336,890**	**39,870**	**(33,022)**	**343,738**
Տարվա վնաս	-	-	(53,329)	(53,329)
Հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**336,890**	**39,870**	**(86,351)**	**290,409**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

(հազար դրամ)	**2025**	**2024**
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		
Ստացված տոկոսներ	2,553	477
Վճարված տոկոսներ	(701)	(1,981)
Ստացված կոմիսիոն գումարներ	18,764	87,892
Վճարված կոմիսիոն գումարներ	(424)	(48,304)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(64,481)	(47,894)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)	85,806	255,332
Այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)	(94,115)	(80,210)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**(52,598)**	**165,312**
Վճարված շահութահարկ	-	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**(52,598)**	**165,312**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրում	-	(1,200)
Տրված փոխառությունների ավելացում	(45,087)	-
Բանկերում տեղաբաշխված ավանդների ավելացում	(181,351)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(11,854)	(100)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	**(238,292)**	**(1,300)**
Դրամական միջոցների հոսքեր Ֆինանսավորման գործունեությունից		
Ստացված փոխառությունների ավելացում	226,508	(171,272)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	47,699	-
Թողարկված բաժնետոմսեր	-	(14,110)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	**274,207**	**(185,382)**
Ընդամենը դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսքեր	**(16,683)**	**(21,370)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	18,118	38,230
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	310	1,258
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	**1,745**	**18,118**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեություն

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է 2023թ. մայիսի 30-ին Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերությունը ստացել է Ներդրումային ծառայությունների լիցենզիա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից 2023թ. մայիսի 30-ին: Ընկերության հիմնական գործունեությունն է հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում, իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների իրականացում, արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին:
Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից:
Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Փավստոս Բուզանդի փողոց, շենք 15, տարածք 24,25: Ընկերության հավասար մասնաբաժինով ձայնի իրավունքի տրվող բաժնետոմսերի սեփականատերերն են Արամ Կայֆաջյանը՝ 49%, «ՖԵՏՉ» ՍՊԸ-ն՝ 9.99%, Մաքսիմ Դրյոմինը՝ 9.99 %, Գևորգ Պատվականյանը՝ 9%, Արման Մելքոնյանը՝ 9%, Սամվել Սահակյանը՝ 9%, «Ինվիա Ինվեսթմենթ» ՓԲԸ-ն՝ 4.02%:

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Արցախի Հանրապետությունում պատերազմը և վիճարկելի տարածքների շուրջ ընթացող քաղաքական զարգացումները զգալի ազդեցություն են ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Ներկայիս փուլը կարելի է բնութագրել որպես կայուն վերականգնման ժամանակաշրջան: Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն իրադարձությունների ապահովելու զարգացման նպատակով, այդուհանդերձ, անկանխատեսելիությունից՝ ելնելով Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ղեկավարության գնահատականը Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն
Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (”ՖՀՄՍ”) պահանջների համաձայն:

Չափման հիմունքները
Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:
Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում
Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Գործունեության անընդհատությունը
Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ
Տոկոսային եկամուտը և ծախսը՝ բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տոկոսներից, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ
Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով: Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում

են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարումից հետո:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռք բերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա)«իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ՝ (ԻԱՇԿՎ), բ)«իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ՝ (ԻԱԱՀՖԱ), գ)ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են, և

- սկզբնական ճանաչման պահին բաժնային գործիքը, որը չի պահվում առևտրական նպատակներով, կարող է անդառնալիորեն նախորոշվել որպես ԻԱԱՀՖԱ չափվող: Այդպիսի ընտրությունը կատարվում է գործիք առ գործիք հիմունքով:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պատքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից իվեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով: ԱՊԿ-ը պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատական է: Դա չափվում է որպես դրամական պակասուրդի (պայմանագրի համաձայն Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի միջև տարբերություններ, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

ԻԱՇԿՎ ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՇԿՎ չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակներով կամ դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեդջավորման գործիք:

Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿՎ չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝այդ հիմունքներով, կամ այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

ԻԱՇԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որ ի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Արտարժութային գործարքներից եկամուտները (վնասը) ներառում է արտարժույթով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտը (վնասը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժութային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Ընկերության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

	31 դեկտեմբեր 2025թ.	*31 դեկտեմբեր 2024թ.*
ՀՀ դրամ/ 1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
ՀՀ դրամ/1 Եվրո	449.01	413.89

Հարկային հաշվառում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գուդվիլի կամ կազմակերպությունների միավորում չհանիդիսացող գործառնություններում ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Ընկերության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են ՝այլ ծախսեր՝ հոդվածում: Անուղակի հարկերի գումարներն ներառվում են այն նյութական կամ ոչ նյութական արժեքի գումարի մեջ որին վերաբերվում են այդ հարկերը:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Վարկային կազմակերպությանը ետ վերադարձման:
Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են

Համակարգչային և այլ տեխնիկա	1 տարի
Գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ	5 տարի

Հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են: Վերագնահատման արդյունքները արտացոլվում են ՀՀՄՍ 16-ով սահմանված կարգով:

Վարձակալություն

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում գրասենյակային տարածքների օգտագործման նպատակով: Գրասենյակային տարածքների վարձակալական պայմանագրերը սովորաբար կնքվում են երեք տարի ժամկետով, ժամկետի երկարաձգման հնարավորությամբ: Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք իրենցից ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվներն օգտագործելու իրավունքը: Ընկերությունը վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրեր չի կնքում:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտժիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնական ուղղակի ծախսումները, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված վարձակալության ցանկացած խրախուսումներ: Բացառությամբ եթե Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ սեփականության իրավունքով ձեռք կբերի վարձակալված ակտիվը, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով օգտակար ծառայության ժամկետի և վարձակալության ժամկետի նվազագույնի ընթացքում: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Ընկերության՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Ընկերությունն օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության

հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներկայացվում են հիմնական միջոցների հետ միասին:

Ընկերությունը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն):

Գործառնական – Ընկերությունը որպես վարձատու

Վարձակալությունները, երբ Ընկերությունը չի փոխանցում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված նշանակալի բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածի ընթացքում, որում դրանք ստացվում են:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Ոչ նյութական ակտվիները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտվիները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանկացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 5 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Փոխառություններ

Փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացառությամբ որակավորվող ակտիվներին վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Նոր և վերանայված ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ) -արժույթը համարվում է փոխարկելի, երբ կազմակերպությունն ի վիճակի է փոխարկել տվյալ արժույթը այլ արժույթի հետ շուկաներում կամ այլ փոխարկման մեխանիզմով, որն առաջացնում է իրավաբանորեն ամրագրված իրավունքներ և պարտականություններ՝ առանց անհարկի ուշացումների, և կարող է փոխարկել նշանակալի չափով գումարներ

Այս փոփոխությունը էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:
Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:
Ղեկավարության կանխատեսմամբ՝ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Բացահայտումներ (ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ) - պահանջվում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին: Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռքբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել:
- Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - պարզաբանվում է որ առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչման պահին պետք է չափվեն այն արժեքով, որը որոշվել է կիրառելով ՖՀՄՍ 15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» հաշվապահական ստանդարտը:
- Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ:

- Էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման դեպքում պարտավորությունը կարող է ապաճանաչվել վճարումը կատարելու պահին, եթե կազմակերպությունը չի կարող չեղարկել, կանգնեցնել կամ հետ կանչել վճարումը, օգտագործել այդ միջոցները և վճարման համակարգի հետ կապված ռիսկը աննշան է:
- Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների - հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ֆինանսական ակտիվի գծով բավարարված է հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ համարվելու պայմանը, եթե ակտիվի հոսքերը պայմանական են (օրինակ կախված են արտանետված ջերմոցային գազերի ծավալից), պայմանագրային հոսքերը վերանայումից առաջ և հետո համապատասխանում են բազային վարկային համաձայնագրի բնութագրերին, ինչպես նաև հոսքերի վերանայումը կապակցված է բազային վարկային ռիսկին կամ վերանայված հոսքերը նշանակալիորեն չեն տարբերվում շուկայում համանման ֆինանսական ակտիվի հոսքերից:
- Վերահաշվարկումը գերսղաճային տնտեսության արժույթով (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ) - եթե ներկայացման արժույթը գերսղաճային տնտեսության արժույթ է, իսկ ֆունկցիոնալ արժույթը ոչ, ապա ֆինանսական հաշվետվությունները (արտերկրյա ստորաբաժանման արդյունքները և ֆինանսական վիճակը)՝ ներառյալ համադրելի ցուցանիշները, պետք է վերահաշվարկվեն ներկայացվող ամենավերջին հաշվետու ժամանակաշրջանի փակման փոխարժեքով:
- Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ),
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» - ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (նախկին շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը) պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. Բացահայտումներ» - հնարավորություն է տրվում հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպություններին, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:

5. Զուտ տոկոսային եկամուտ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		
Տոկոսային եկամուտներ ֆին կազմակերպություններից	39,874	35,793
Այլ	70	-
	39,944	**35,793**
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(2,094)	(1,671)
	(2,094)	**(1,671)**
Զուտ տոկոսային եկամուտ	**37,850**	**34,122**

6. Զուտ օգուտ արտարժույթի վաճառքից և փոխարժեքային տարբերությունից

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Արտարժույթի առք ու վաճառքից և փոխարժեքային տարբերությունից օգուտ	29,934	54,522
Արտարժույթի առք ու վաճառքից և փոխարժեքային տարբերությունից վնաս	(19,101)	(25,546)
Զուտ օգուտ	**10,833**	**28,976**

7. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Կոմունալ ծառայություններ և վարձակալություն	54,651	31,681
Մասնագիտական ծառայություններ	42,758	32,794
Կազմակերպության շենքի և այլ	19,574	20,062
Մաշվածություն	2,589	3,293
Գովազդի ծախսեր	2,383	879
Ներկայացուցչական ծախսեր	406	410
Անվտանգության ծառայություն	216	120
Գործուղման ծախսեր	157	400
Ընդամենը	**122,734**	**89,639**

8. Շահութահարկի գծով ծախս

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկ	10,135	2,909
Ընդամենը	**10,135**	**2,909**

2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Շահույթի կամ վնասի և այլ հմապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվե-տվությունում ճանաչված	2025թ. հունվարի 1	Շահույթի կամ վնասի և այլ հմապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվե-տվությունում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
Հարկային վնաս	962	6,224	7,186	15,458	22,644
Ներդրումային արժեթղթեր	164	(2,813)	(2,649)	(3,636)	(6,285)
Պահուստներ	914	(502)	412	(1,817)	-1,405
Տեղաբաշխված ավանդներ	-	-	-	130	130
	2,040	2,909	4,949	10,135	15,084

9. Դրամական միջոցներ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Բանկային հաշիվներ	1,745	18,118
	1,745	**18,118**

Դրամական միջոցները արժեզրկված, ժամկետանց կամ գրավադրված չեն, դրանց նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ։

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բանկերում տեղաբաշխված այնպիսի միջեոցներ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը։

10. Տեղաբաշխված ավանդներ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Ժամկետային ավանդներ	180,547	-
Արժեզրկման պահուստ	(725)	-
Ընդամենը	**179,822**	**-**

11. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Դեպոնացված միջոցներ ֆինանսական կազմակերպություններում	18,096	13,737
Ընդամենը	**18,096**	**13,737**

12. Տրված փոխառություններ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Իրավաբանական անձանց տրված փոխառություններ	83,037	-
Ընդամենը	**83,037**	**-**

13. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Պետական տոկոսային արժեթղթեր	370,056	378,360
Ընդամենը	**370,056**	**378,360**

Ներդրումային արժեթղթերը ժամկետանց չեն:

14. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

(հազար դրամ)	Համակարգչային և այլ տեխնիկա	Գրասենյակային գույք և այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,305**	**925**	**280**	**6,510**
Ավելացում	1,073	-	100	1,173
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,378**	**925**	**380**	**7,683**
Ավելացում	5,201	225	6,428	11,854
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,579**	**1,150**	**6,808**	**19,537**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,276**	**127**	**21**	**2,424**
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	3,057	164	72	3,293
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,333**	**291**	**93**	**5,717**
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	825	169	1,594	2,588
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,158**	**460**	**1,687**	**8,305**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,045**	**634**	**287**	**1,966**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,421**	**690**	**5,121**	**11,232**

15. Այլ ակտիվներ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Այլ առևտրային կազմակերպություններից ստացվելիք այլ գումարներ	40,124	18,056
Կանխավճարներ մատակարարներին	5,942	7,089
Այլ	3,770	195
Ընդամենը	**49,836**	**25,340**

16. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Վարկեր ռեպո համաձայնագրերով	48,423	-
Ընդամենը	**48,423**	**-**

17. Ներգրավված փոխառություններ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Իրավաբանական անձանցից ստացված փոխառություններ	288,327	-
Ընդամենը	**288,327**	**-**

Ներգրավված փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

18. Այլ պարտավորություններ

(հազար դրամ)

	31.12.25թ.	31.12.24թ.
Արտաքին կրեդիտորական պարտքեր նկատմամբ	7,050	8,833
Պահուստներ	4,804	2,644
Ընդամենը	**11,854**	**11,477**

19. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմել է 351,000 հազար ՀՀ դրամ, որը բաղկացած է 3,510,000 սովորական բաժնետոմսից: Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 100 դրամ: Ընկերության բաժնետիրական կապիտալի 4.02%-ը հետ է գնված բաժնետերերից և դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղաբաշխված չէ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Գլխավոր պահուստ

Օրենսդրության պահանջների և Ընկերության կանոնադրության համաձայն՝ Ընկերությունն իր չբաշխված շահույթից պետք է ստեղծի բաշխման ոչ ենթակա նվազագույն պահուստ՝ բաժնետիրական կապիտալի 15%-ին հավասար գումարի չափով՝ ապագա վնասները ծածկելու համար:

20. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի

անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են՝

Հազար ՀՀ դրամ	2025	2024
Աշխատավարձ և պարգևատրումներ և փոխհատուցումներ	33,363	35,462
	33,363	**35,462**

21. Ռիսկի կառավարում

21.1 *Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի (ակտիվների) կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով Ընկերությունը կկրի ֆինանսական կորուստներ: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները:Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում:

21.2 *Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես, առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքների ապագա իրական արժեքների փոփոխությամբ Ընկերությունը կկրի վնասներ: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը:

21.3 *Արտարժույթի ռիսկ*

Արտարժույթի ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	724	1,021	1,745
Տեղաբաշխված ավանդներ	-	179,822	179,822
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	18,096	18,096

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Տրված փոխառություններ	-	83,037	83,037
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	370,056	-	370,056
Ներդրումներ այլ անձանց կապիտալում	675	-	675
Այլ ակտիվներ	40,120	9,716	49,836
Ընդամենը	411,575	291,692	703,267
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	48,423	-	48,423
Ներգրավված փոխառություններ	-	288,327	288,327
Կրեդիտորական պարտքեր բաժնային արժեթղթերի հետգնման գծով	84,240	-	84,240
Այլ պարտավորություններ	11,854	-	11,854
Ընդամենը	144,517	288,327	432,844
Զուտ դիրք 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	267,058	3,365	270,423
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	411,986	24,243	436,229
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	95,190	527	95,717
Զուտ դիրք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	316,796	23,716	340,512

21.4 *Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությանը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ընկերության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական պարտավորությունների մարման ակնկալվող ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

Տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքներ.

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2025թ. միջին արդյունավետ տոկոսադրույք	2024թ. միջին արդյունավետ տոկոսադրույք
Տոկոսակիր ակտիվներ		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9.8-10.7%	9.6-10.8%
Տոկոսակիր պարտավորություններ		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7.25%	-

21.5 *Գնային ռիսկ*

Գնային ռիսկը այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով: Արդյունքում, գնային ռիսկը ֆինանսական գործիքի շուկայական գնի փոփոխության հետևանքով կորուստ կրելու հավանականությունն է:

21.6 *Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ Ընկերությունը կարող է հանդիպել դժվարությունների ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս: Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, որը բնական է ֆինանսական հաստատությունների համար, ինչն էլ պայմանավորված է իրականացվող գործարքների տարբերություններով և դրանց հետ կապված անորոշությամբ: Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

	Ցպահանջ և մինչև 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ						
Դրամական միջոցներ	1,745	-	-	-	-	1,745
Տեղաբաշխված ավանդներ	-	179,822	-	-	-	179,822
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18,096	-	-	-	-	18,096
Տրված փոխառություններ	83,037	-	-	-	-	83,037
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	370,056	-	370,056
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	-	-	675	-	-	675

	Ցպահանջ և մինչև 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Այլ ակտիվներ	49,836	-	-	-	-	49,836
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	152,714	179,822	675	370,056	-	703,267
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(48,423)	-	-	-	-	(48,423)
Ներգրավված փոխառություններ	(288,327)	-	-	-	-	(288,327)
Կրեդիտորական պարտքեր բաժնային արժեթղթերի հետգնման գծով	-	-	-	(84,240)	-	(84,240)
Այլ պարտավորություններ	(7,050)	-	-	-	-	(7,050)
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(343,800)	-	-	(84,240)	-	(428,040)
Զուտ դիրքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(191,086)	179,822	675	285,816	-	275,227

	Ցպահանջ և մինչև 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ						
Դրամական միջոցներ	18,118	-	-	-	-	18,118
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,737	-	-	-	-	13,737
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	19,353	359,007	-	378,360
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	-	-	674	-	-	674
Այլ ակտիվներ	25,340	-	-	-	-	25,340
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	57,195	-	20,027	359,007	-	456,172
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Այլ պարտավորություններ	(93,073)	-	-	-	-	(93,073)
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(93,073)	-	-	-	-	(93,073)
Զուտ դիրքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	150,268	-	20,027	359,007	-	363,099

Ընկերությունը գտնում է, որ բացասական իրացվելի դիրքը կառավարելի է հետգնման պայմանագրերի վերակնքման միջոցով, քանի որ վերջիններս ապահովված են բարձր իրացվելի ֆինանսական գործիքներով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պարտքային արժեթղթերի վաճառքով միջոցով:

22. Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով Ընկերության շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Ընկերությունն ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապվված բոլոր արտաքին պայմաններին: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից:

23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք կարող էին հանգեցնել 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների ճշգրտման կամ լրացուցիչ բացահայտման: